# ՀԱՅԱՍ¬ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

**Հոդված 1.** <<Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-532-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում <<Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարու-թյան առաջարկությամբ>> բառերը փոխարինել <<վարչապետը>> բառով,

2) 4-րդ մասում <<Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարու-թյան առաջարկությամբ>> բառերը փոխարինել <<Կառավարությունը>> բառով:

**Հոդված 2**. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում <<սպայական կոչումները շնոր-հում է Հայաստանի Հանրապետության Նախագահը>> բառերը փոխարինել <<զինվորական կոչումները շնորհում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ>> բառերով:

**Հոդված 3**. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրու-թյամբ.

<<2. Պետական լիազոր մարմնի ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչա-պետը:>>:

**Հոդված 4**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ և 6-րդ գլուխներն ուժի մեջ մտնելու օրվանից: